

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՑԵԿՏԸ**

Անահիտ Զիջյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտ. քարտուղար*

Սոցիալական աշխատանքը, լինելով «երիտասարդ» գիտակարգ և իր առջև ծառացած ունենալով իր գիտակարգին ներկայացվող չափորոշիչների համապատասխանելիության ապացուցման հիմնախնդիրը, որպես առաջնային քննարկում է սոցիալական աշխատանքի որպես գիտություն ուսումնասիրության ուրույն առարկայի, օբյեկտի, հիմնախնդրային դաշտի առանձնացման հարցը¹։ Անդրադառնալով Ռուսաստանում սոցիալական տեսության ձևավորման գործընթացին Վ. Նիկիտինը տալիս է վերոհիշյալ հիմնախնդրի վերաբերյալ իր ամփոփ ընկալումը. «Հիմնական խնդիրը շարունակում է մնալ սոցիալական աշխատանքի տեսության և պրակտիկայի տեսա-մեթոդաբանական հիմքերի հետագա մշակումը, օբյեկտիվորեն հաստատված և փոխկապակցված նախնական դրույթների, պնդումների, վարկածների և եզրակացությունների համալիր, որոնց միջոցով և հնարավոր է հուսալիորեն բացահայտել նրա (տեսության) կատարման օբյեկտիվ սկզբունքները, օրենքները և օրինաչափությունները²»։

Սոցիալական աշխատանքի տեսության և գիտակարգի ձևավորման հարցում առավել նշանակալի ենք համարում անդրադառնալ սոցիալական աշխատանքի ուսումնասիրության ուրույն օբյեկտի օբյեկտիվ առկայության հիմնավորման հարցին։ 20-րդ դարի ռուս փիլիսոփա Ս. Ֆրանկը, անդրադառնալով գիտության ուսումնասիրության ուրույն առարկայական տիրույթի

¹ Անդրադառնալով սոցիալական աշխատանքի որպես գիտության կայացման գործընթացին Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ է նշել, որ սկսած անցած դարի 90-ական թվ. այդ խնդիրներին անդրադարձել են ոլորտի մի շարք ներկայացուցիչներ՝ Խոլոստովա Եվ.Ի., Պավլենկո Պ.Դ., Ֆիրսով Ս.Վ., Գրիգորև Ս. Ի., Նիկիտին Վ.Ա., Գուսյակովա Լ.Գ. և այլք։

² Никитин В.А., Состояние и проблемы развития теории социальной работы в России // Знание. Понимание. Умение, М., 2006, №4, с. 137.

առանձնացման հարցին, տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Առարկան հանդիսանում է ծանոթ բովանդակություն, որին ուղղված ենք մենք, որպեսզի բացահայտենք իր կամ իր հետ կապված նոր բովանդակություն...»³:

Սոցիալական աշխատանքի որպիսության էական առանձնահատկությունների հասկացման ու մեկնողաբար բացորոշման համար, նախնական ու առաջնային է էպիստեմոլոգիական հարցն առ այն, թե՛ «գոյություն ունի՞, արդյոք, սոցիալական աշխատանքը» և հետևողականորեն հաջորդող մյուս հարցադրումը՝ «եթե այո, գոյություն ունի, ապա՞ ինչպիսի՞ն է սոցիալական աշխատանքի գոյությունը»: Սոցիալական աշխատանքի «ինչպես» գոյությունը քննող ու այլևս ոչ նախնական, այլ՝ կենտրոնական ու ամփոփիչ այս հարցը կարելի է վերաձևակերպել նաև այլ կերպ. «ինչպե՞ս է հնարավոր, անհրաժեշտ ու նախընտրելի սոցիալական աշխատանքի այն գոյությունը, որում առկա կայացրալ է նրա իսկությունը և ապահովված նրա օբյեկտիվությունը»: «Սոցիալական աշխատանք» գիտության ճշմարիտ ու հենց տեսականորեն կայացման համար անհրաժեշտ ու այն սկզբունքորեն էացնող (գոյացնող) նախապայման է սոցիալական աշխատանքի օբյեկտիվության պարզաբանումը: Երբ խոսվում է որևէ ֆենոմենի օբյեկտիվության մասին, պետք է ցույց տրվի, թե ինչպես է հնարավոր այդ օբյեկտիվությունը որպես այդպիսին, ինչպես այն կարող է կայանալ: Բացահայտել սոցիալական աշխատանքի օբյեկտիվությունը, կնշանակի՝ բացորոշել նրա գոյության, ինչպես նաև դրա վերաբերյալ գիտելիքի օբյեկտիվության կայացման, հնարավորությունն ու կատարումը: Իսկ սոցիալական աշխատանքի գոյության ու նաև դրա վերաբերյալ գիտելիքի օբյեկտիվության կայացման հնարավորությունն ու կատարումը բացահայտելը, ըստ էության, նշանակում է սոցիալական աշխատանքի՝ տեսական ու գործնական իր բաղադրիչների երկմիասնությամբ որպես հենց տեսագործնական գիտակարգ կայացման ստույգ հիմնավորում ու բացորոշում:

Գիտելիքը կարող է լինել օբյեկտիվ, եթե մտացածին ու կամայածին և հենց այս իմաստով սուբյեկտիվ չէ, այլ՝ առարկայական

³ St' u Франк С., Предмет знания, М. Наука; 1995,
https://royallib.com/book/s.1frank/predmet_znaniya.html:

տիրույթի որպիսության առանձնահատկությունների ստույգ ճշմարիտ իմացություն է:

Սոցիալական աշխատանքի գոյության վերաբերյալ հարցն անմիջականորեն առնչվում է այն հարցին, թե **օբյեկտի՞վ է, արդյոք, սոցիալական աշխատանքի գոյությունը, թե՞ սուբյեկտիվ՝ ինքնակամ մտքը հորինվածք՝ կյանքի իրողությունների ռեալ գոյության վրա չհիմնված գոյությամբ:** Եվ եթե այո, օբյեկտիվ է, ապա՝ հարկ է հարցադրել, թե ինչպիսին է սոցիալական աշխատանքի օբյեկտիվությունը: Այս առնչությամբ սկզբունքային նշանակություն ունի ամրագրել, որ ինչպես Մ. Վերերի «Սոցիալական ճանաչողության օբյեկտիվությունը» հայտնի աշխատությունում ասվելով՝ «օբյեկտիվություն»⁴, նախ և առաջ այն պետք է հասկանալ «օբյեկտայնություն», այնպես էլ՝ սոցիալական աշխատանքի «օբյեկտիվությունը» առաջնահերթորեն հարկավոր է հասկանալ որպես նրա «օբյեկտայնություն»: Սոցիալական ճանաչողությունը հիմնված է, արդյոք, կյանքի ռեալ իրողությունների վրա որպես իր ճանաչողական մտքի ու տեսության գոյությունը կայացնող հիմք ու հենց օբյեկտ, այդկերպ և ինքը ներկայանալով որպես օբյեկտիվ գիտելիք՝ օբյեկտը ստույգ ճանաչող և նրա իսկությունը բացորոշող հանրանշանակ իմացություն ու գիտական գիտելիք: Եվ երբ հստակ ու ստույգ հայտորոշվում է օբյեկտը, դրա որպիսության առանձնահատկություններին **ադեկվատությամբ** նշվում ու մշակվում է նաև մեթոդը, որ և **հնարավորում, անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն ապահովում է** արդեն գիտելիքի օբյեկտիվությունը՝ այդ օբյեկտի ստույգ ճանաչողությունն ու իսկության բացորոշումը հանրանշանակ՝ նույնորոշելի ու կրկնորոշելի գիտելիքում:

Սոցիալական աշխատանքը մարդկային իրողությունների մեջ մի գոյավոր է՝ կյանքի ռեալ գոյությունից ծնված ու մտածվող մի գոյացություն, և, այդպիսով, սոսկ **մակամտածական՝** մարդկային կամայականությամբ ու երևակայությամբ լոկ մտքից մակածված ու ռեալ գոյությանը չառնչվող երևույթ չէ: Մարդկային կյանքի բարենշանակ կայացման ու կատարելագործման անհրաժեշտություն ու նախընտրելիություն ցուցանող էական հիմնախնդիրներից բխմամբ, որպես հենց **մարդկային հոգևոր-քաղաքակրթական**

ճ

⁴ Вебер М., Избранные произведения, М., Прогресс, 1990, с. 345

ինքնության ու համակեցության բարենշանակ կայացման սոցիալական հիմնախնդիրներին ադեկվատ պատասխան, կյանքի է կոչվել ու կատարելագործմամբ հանդերձ՝ շարունակաբար կայանում ու իր որպիսությունն է հաստատում սոցիալական աշխատանքը:

Որո՞նք են այն «սոցիալական իրողությունները», որոնք և երևակվում են որպես հասարակության, մարդկության կյանքում ներկա «սոցիալական հիմնախնդիրներ»: Սոցիոլոգիայի բառարանում «սոցիալական հիմնախնդիրը» սահմանվում է որպես իրականության մեջ, շրջակա կյանքում առկա հակասական իրավիճակ, որը կրում է զանգվածային բնույթ և ազդում է՝ մեծ սոցիալական խմբերի կամ սոցիալական ինտիտուտների շահերի վրա⁵: «Սոցիալական հիմնախնդիր» բառակապակցությունը առաջացել է 19-րդ դարում որպես հասարակության արդյունավետ գործառնությանը խոչընդոտող պայմանների և իրավիճակների անվանում և կապված է եղել աղթատների կյանքի և աշխատանքային պայմանների ուսումնասիրության հետ (Չարլզ Բուս)⁶: Ֆուլլերի և Մայերսի դասական աշխատությունում այն սահմանվել է որպես «...այն պայմանը, որը սահմանվում է մարդկանց մեծ քանակով, որպես շեղում որոշ սոցիալական նորմայից, որը նրանք արժնորում են»⁷: Սոցիալական հիմնախնդիրն ունի երկակի կառուցվածք՝

1) օբյեկտիվ, անբարենպաստ կամ անբարեկարգ պայմաններ, վիճակ,

2) դրանց սուբյեկտիվ գնահատումը, որն էլ այն սահմանում է որպես անցանկալի, ապակառուցողական կամ անբարոյական⁸: Հենց այդ երկակիությունն ընկած է նաև ուսումնասիրություններում երկու պարադիգմալ մոտեցումների առկայության հիմքում՝ օբյեկտիվիստական (Թ. Պարսոնս, Ռ. Մերտոն) և սուբյեկտիվիստական (Ռ. Ֆուլլեր, Ռ. Մայերս):

⁵ St' u Добренчиков В. И., Кравченко А. И., Социология: в 3-ех томах: словарь по книге, М., Социологический факультет МГУ им. М. В. Ломоносова, 2003-2004.

⁶ St' u Симонова Т.М., Интегративный подход к исследованию социальных проблем // Журнал социологии и социальной антропологии. 2009. Том XII. № 1, էջ 66-74:

⁷ St' u Fuller R., Myers R.R., The Natural History of a Social Problem // American Sociological Review. 1941. Vol. 6. June, p. 320.

⁸ St' u Ovcharchyn-Devitt C., Calby P. and others, Approaches Towards Social Problems: A Conceptual Model // Basic and Applied Social Psychology, 1981, 2 (4), p. 277.

Թե՛ ատօրեական մտածողության, թե՛ մասնագիտական գրականության մեջ և գիտական հետազոտություններում՝ սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, տնտեսագիտական, առկա են սոցիալական հիմնախնդիրների բազում տիպաբանություններ և օրինակներ, հիմնականում, իհարկե, թվարկման տարբերակով՝ աղքատություն, գործազրկություն, բնակչության բնական աճի անկում, սոցիալական որբություն, ընտանեկան բռնություն և այլն:

Այդ «սոցիալական իրողությունները» անձանց և խմբերի **կարիքներն ու տկարություններն** են: Եվ այդ բնույթի իրողությունները ներկայանում են որպես «սոցիալական հիմնախնդիրներ» և ավելին՝ «հոգևոր-քաղաքակրթական հիմնախնդիրներ», որոնցով և հասարակությանն ու ողջ մարդկությանն անհրաժեշտ ու նաև նախընտրելի է որոշարկել **սկզբունքորեն հոժարակամ ընտրությամբ ու համատեղ կամքով իր «անելիքը»**: Ինչպե՞ս և ինչո՞ւ: Պատասխանելով «ինչպե՞ս» հարցին, կարելի է ամրագրել, որ հասարակությունը և ողջ մարդկությունը սկզբունքորեն հոժարակամ ընտրությամբ ու համատեղ կամքով իր «անելիքը», որպես պետության (պետությունների) **սոցիալական քաղաքականություն**, կատարումի է բերում և՛ պետության ու նաև միջպետական ինստիտուցիոնալ կառույցների, և՛ հասարակական կազմակերպությունների միջոցով՝ սահմանելով սոցիալական քաղաքականության նպատակն ու խնդրակարգը: Իսկ սոցիալական քաղաքականության հիմքը, որ և կարող է հնարավորել, նպաստավորել ու ապահովել մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, ընդհանուր կենսակարգի ու ազատական ընտրությամբ անձնավորյալ կենսակերպի ներկատաթելագործվող կայացում, հենց **«մարդասիրության»** ու դրանից բխող **«արդարության»** հոգևոր զգացմունքներն ու իդեաներն են, և այդ իդեաների մտահայեցումը որպես դիտավորություն և ըստ այդմ՝ մտակառույց կերպարանումն ու բուն կատարումը ներկայանում է որպես սոցիալական քաղաքականություն:

Աստ՝ պատասխանելով նաև «ինչո՞ւ» հարցին, հարկ է ամրագրել, որ առաջնահերթորեն հենց **«մարդկային «կարիքների ու տկարությունների» վրա է իր ուշադրությունը կենտրոնացնում մարդկային կյանքի բարելավմանը կամ բարեկերպմանը կոչված ու մարդկաձեց միասնացնող «մարդասիրության»** հոգևոր զգացմունքն ու դրա վրա մշտապես հիմնված ու հենց ըստ այդմ անընդհատ

կատարելագործվող՝ «արդարության» իդեան: Արդարն, «մարդասիրության» հոգևոր զգացմունքով՝ մարդկային հոգու երագանք ու իդեա է ամենայն մարդկանց կյանքի բարեկարգությունը: Բարեկարգությունը որպես երագանք՝ հոգևոր սիրո առավելագույն խտություն, ու նաև հենց իդեա՝ մտքի առ իմաստություն առավելագույն ձգտում, հայեցում ու կատարում է ներկայանում ոչ միայն անհատ անձի ներաշխարհում, այլև հասարակության ու ողջ մարդկության ընդհանուր սոցիալական և հոգևոր զգացմունքներում ու գաղափարաբանությունում, որպես տեսական ու գործնական «անելիքի» մոտիվացիա ու բովանդակություն գործառնելով սոցիալական կյանքում:

Սոցիալական աշխատանքի տեսությունում գործածվում են «կարիքավորություն», «կարիքներ», «տկարություններ» հասկացությունները, որոնք և ներկայանում ու իրենցով բացահայտում են սոցիալական աշխատանքի գոյության համար հիմնարար ու էական իրողություններ: *Կարիքավորությունն է այն իրողությունը կամ ֆենոմենը, որի վրա հիմնվում ու կյանքի է կոչվում սոցիալական աշխատանքը:* Ընդ որում, ասելով՝ «կարիք» կամ «կարիքավորություն», հարկավոր է նկատի ունենալ ոչ սոսկ «անհրաժեշտ կարիքը» կամ «կարիքավորությունը», այլև մարդկային ինքնության ու կյանքի զարգացողական հեռանկարով՝ նաև «նախընտրելի կարիքը» կամ «կարիքավորությունը»:

Իսկ ինչպիսին է «կարիքներ» և «կարիքավորություն» հասկացությունների հարաբերակցությունը: «Կարիք» հասկացությունը կոնկրետ է, իսկ «կարիքավորությունը»՝ ընդհանուր: «Կարիք» հասկացությունը, իր բովանդակությամբ նշելով եզակի կամ տիպական որոշակի դեպք(եր)ի մարդկային ինքնության ու կյանքի «կարիքավորություն», կոնկրետ է: Մարդկային «կարիքավորություն» ու «կարիքները» երկբնույթ են՝ **հոգևոր ու նյութական:** Երկբնույթ իր արտահայտություններում՝ և՛ հոգևոր, և՛ նյութական, «կարիքավորության» զանազանությունը, համատարած լինելը և յուրաքանչյուր իր տեսակում թեթևի հետ նաև ծանր ու խորացած դրսևորումները որպես կոնկրետ «կարիք»՝ անհրաժեշտ են դարձրել որպես սոցիալականորեն նշանակալի դիտել ոչ միայն պրակտիկ ու դեպքային, կոնկրետ «կարիք(ներ)ը», այլև սկզբունքորեն՝ **«կարիքը որպես այդպիսին»**, այսինքն՝ **«ընդհանուր կարիքը»** կամ **ընդհանուր**

«կարիքավորությունը»: Բնույթով մասնավոր ու կոնկրետ կարիքի մեջ դրսևորվում է և իր ներկայացածության կոնկրետացումն ունի **«կարիքավորության» իդեան՝ ընդհանուրը:** Մարդկային կյանքի իրողությունները ուսումնասիրելով՝ հասկանալ «ընդհանուր կարիքավորության» իդեան, կնշանակի՝ հասկանալ ոչ թե մասնավոր գոյը, այլ **ընդհանուր գոյը:** Եթե որպես հայեցակարգային հիմնադրույթ համարվում է, որ սոցիալական աշխատանքը սկզբունքորեն գործ ունի միմիայն **մասնավոր ու կոնկրետ կարիքի** և ուրեմն՝ «մասնավոր գոյի» հետ, ապա՝ անհրաժեշտորեն պետք է նաև ընդունել, որ սոցիալական աշխատանքը կարող է կայանալ միմիայն որպես այնպիսի սոցիալական բներևույթ, որն արտահայտում է սոսկ **գործունեության կերպ** և նույնիսկ **կոնկրետ ու մասնավոր գործելակերպ՝ հենց կոնկրետ կարիքի առնչությամբ:**

Կարիքավորության կոնկրետ դրսևորումներից դեպի արդեն «ընդհանուր կարիքավորության» իդեային անդրադարձը և որպես ուշադրության և ապա՝ հասկացման ու աջակցության հիմնախնդիր ճանաչելն էապես փոխում է սոցիալական աշխատանքի գոյության կարգը: Ի տարբերություն «մասնավոր կարիքի», անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյականությամբ սոցիալական աշխատանքում հարկ է հայեցակարգային հիմնադրույթ ձևակերպել **տեսական հասկացման և գործնական հոգածության ու հենց աջակցության օբյեկտ դիտարկել նաև «ընդհանուր կարիքավորությունը, այսինքն՝ «ընդհանուր գոյը»:** Ինչպիսի՞ հետևանք է առաջացնում սոցիալական աշխատանքի գոյության կարգավիճակում նրա տեսական ու պրակտիկ գործառնության խնդրակարգում էական այս փոփոխությունը: Սոցիալական աշխատանքի տեսական-ճանաչողական և գործնական-աջակցողական խնդրակարգում «մասնավոր կարիքից» առ «ընդհանուր կարիքավորության», առ «ընդհանուր գոյ» անցումը սոցիալական աշխատանքին հաղորդում է տարաբնույթ բազմազանություն: Այն կայանում ու հայտնորշվում է արդեն ոչ միայն որպես սոսկ գործունեության կերպ և նույնիսկ կոնկրետ՝ գործելակերպ՝ կոնկրետ կարիքի առնչությամբ: Սոցիալական աշխատանքը կայանում է արդեն նաև որպես **գիտություն՝ «կարիքավորություն» ընդհանուր գոյի և դրան ադեկվատ աջակցության բուն իսկության ու նաև հենց բարեկարգության միտող իմաստի՝ հասկացման ու մեկնորոշման դիտավորության ու**

կատարումի խնդրակարգով: «Մասնավոր կարիքի» հասկացման ու աջակցության խնդրակարգը և այդպերպ գուտ «մասնավոր գիտելիքը» սոցիալական աշխատանքը հաստատագրում է դեռ որպես «իր մասնավոր պրակտիկայի տեսություն», այսինքն՝ դեռ որպես **միմիայն իր մասնավոր պրակտիկայի՝ նույնորեն մասնավոր տեսություն և հենց այդչափ «մասնավոր փորձառություն»:** Սոցիալական աշխատանքն այդպիսին էր նախկինում՝ իր կայացման որոշակի փուլում: Իսկ արդեն նաև «ընդհանուր կարիքավորության» և դրան ադեկվատ «ընդհանուր աջակցության» իդեայի, որում և բովանդակյալ իմաստության խորհուրդի բացորոշումը սոցիալական աշխատանքն իր **«մասնավոր փորձառության»** կարգավիճակից կատարելագործում է դեպի **«ընդհանուր կամ ընդհանրական գիտելիքի»** կարգավիճակի, որով և այն կայանում է որպես **գիտակարգ:**

Իսկ ինչպիսի՞ն է «կարիքավորություն» և «տկարություն» հասկացությունների հարաբերակցությունը: «Կարիքավորություն» հասկացությունն առավել ընդհանուր ու համընդգրկուն է, քան «տկարություն» հասկացությունը: «Տկարությունը» բնորոշում է մարդու հոգևոր ու ֆիզիկական կարողությունը և այս առումով՝ ներքինը: Իսկ «կարիքավորությունը» կարող է պայմանավորված լինել ինչպես անձանց կարողությունների ներքին գործոնով, այնպես էլ հասարակության կողմից ընձեռնված կյանքի պայմանների արտաքին գործոնով: Անձանց ամենայն **«տկարություն»** ներկայանում է որպես **«կարիքավորություն»,** սակայն ամենայն **«կարիքավորություն»** չի ներկայանում անպայմանորեն **«տկարություն»:**

«Կարիքավորություն» հասկացությամբ նշվում է սոցիալական աշխատանքի **օբյեկտը:** Սոցիալական աշխատանքի գոյության համար «կարիքավորության» ու «տկարության» իրողությունները ունեն հիմնարար նշանակություն: «Կարիքավորությունը» և «տկարությունը» այն սոցիալական իրողությունները կամ բնեկություններն են, որոնց վրա հիմնվում ու կյանքի է կոչվում և իրապես գոյություն ունի սոցիալական աշխատանքը: Սոցիալական աշխատանքը **գոյություն ունի անձանց ու խմբերի կարիքավորության ու տկարության իրողությունների վրա իր հիմնադրվածությամբ:** Սա է սոցիալական աշխատանքի **օբյեկտայնությունը,** այսինքն՝ սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության օբյեկտային հիմնավորվածությունը, որի բացահայտմամբ և՛ նրա որպես գիտություն գոյության յոեսական

հիմնավորումը: Քանզի մարդկային որևէ գործունեության՝ տեսական ու պրակտիկ իր բաղադրիչներով ու գործառնություններով հանդերձ, որպես գիտություն կայացման նախնական ու հիմնարար պայմաններից է նրա ուսումնասիրության ու գործառնության **ուրույն ու սեփական օբյեկտի** առկայությունը, որի բացահայտմամբ և՛ որպես գիտություն տեսական հիմնավորումը: Եվ արդ՝ կարելի է հաստատագրել, որ սոցիալական կյանքի մեջ տեղի ունեցող փոփոխությունների այժմյան իրողությունների համատեքստում իր օբյեկտայնությամբ (առարկայականությամբ) և կատարումով (դիտավորությամբ և դրա իրագործմամբ) սոցիալական աշխատանքը ողջ աշխարհում ու նաև Հայաստանում գոյացել, արմատավորվել և որպես այդպիսին **գոյություն ունի օբյեկտիվ հիմնադրությամբ**⁹:

Սակայն, կարելի՞ է արդյոք ասել, որ անձանց ու խմբերի՝ համաբովանդակ կարիքավորությունն է սոցիալական աշխատանքի՝ որպես գիտության ու նաև արվեստի, հոգևոր-տեսական ու նաև հոգևոր-պրակտիկ գործունեության **բուն ու նաև սեփական** օբյեկտը: Արդյո՞ք, մարդկային **ամենայն** կարիքներն ու տկարություններն են ներկայանում որպես սոցիալական աշխատանքի օբյեկտ: Անշուշտ, ոչ: Չէ՞ որ այլ գիտություններ և մարդկային գործունեության տեսակներ կազմակերպված նաև ինստիտուցիոնալ, կառույցային զանազան ձևերով՝ պետական, ոչ-կառավարական, նույնպես առնչվում են կարիքավորության, տկարությունների ու կարիքների հիմնախնդիրներին: Այս հարցի համակողմանիորեն սպառնիչ պատասխանի որոնումներում որպես առաջնային հիմնադրույթ կարելի է նկատել հետևյալ միտքը. **Կարիքավորությունը որպես այդպիսին, դիտված մարդու նկատմամբ, սկզբունքորեն ունիվերսալ է**: Մարդն իր ինքնության ու կյանքի կայացման համար ունենում է բազմատեսակ ու բազմաթիվ կարիքներ, որոնցից ոչ ամենայնն է ընդգրկվում սոցիալական աշխատանքի աջակցողական հոգածության խնդրո առարկայում:

Մարդը որպես բանական էակ, իր առանձնական կյանքն ու նաև այլոց հետ հանրակենցությունը հնարավորելու և բարեկարգությամբ լինելի դարձնելու համար ունի յուրովի՝ կենդանական այլ էակների ինչպես ընդհանրական, այնպես էլ զանազանվող և՛ առավելություններ,

⁹ **Զիջյան Ա., Քոչարյան Ռ.**, Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը», «ԴԱԼԼ», Եր., 2009, էջ 89-90:

և՛ կարիքներ, ուստի և մարդկանցից յուրաքանչյուրին է բնորոշ սկզբունքային կարիքավորություն: Առանձնականի ու հանրակեցության բարենշանակ լինելիության առումով՝ որպես մարդկանցից յուրաքանչյուրի «կարիքավորություն» կարելի ու նաև հարկ է հասկանալ արտաքին ու ներքին անվտանգությունը, առողջությունը, կենսապահովությունն ու կենցաղապահովությունը, կրթությունը, աշխատանքի հասարակական բաժանումը, ինչպես նաև անձի նախասիրությանը, ունակություններին, կրթությանն ու գիտելիքներին համապատասխան այնպիսի աշխատանքով ապահովվածությունը, որում և առավելաչափ կարող է իրագործել իր նվիրումն ու պտղաբերությունը և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ, որոնց լուծման դիտավորության ու կատարումի հոգածության պիտանի ու օգտակար իմաստին են կոչված պետությունն ու ներպետական բազմայլ կառույցները, հասարակական կազմակերպությունները և այլն:

Մարդն ունի նաև **իմացական ակտիվ հետաքրքրություն**, որը կարելի է հասկանալ որպես **«առավելություն»** և **«կարիք»**: Այն «առավելություն» է՝ որպես **բանական իմացականության կարողությամբ** օժտվածություն և ակտիվ, **հետաքրքրությամբ ուղղորդված** ու **նաև կազմակերպված կարգավորությամբ** իր այդ իմացականության դրսևորում: Դրպէ՛հետ մեկտեղ այն նաև «կարիք» է՝ բանական հոգու «գիտական» գործությունն այդ կարողությամբ («իմացական ակտիվ հետաքրքրությամբ») ձեռք բերելի **տեսական իմաստությամբ** զարդարելու: Եվ մարդու ու մարդկության ինքնության հենց այդպիսի կարիքն ու պակասը «լցնելուն» ու հոգալուն է կոչված գիտությունն ու արվեստը:

Արդարև, **մարդկային ինքնության հոգե-մարմնավոր երկմիասնական բնությամբ գոյության կարիքները հոգալուն է կոչված գիտությունն ու արվեստը**: Դրանք կոչված են հոգալու մարդկային **հոգու** և **ուրեմն՝ հոգևոր կարիքները** և դրա հետ մեկտեղ՝ իրենց որոշ արդյունքների կիրառական այլևայլ պրագմատիկությամբ նաև **մարմնական կարիքները**: Մարդն ունի երկու՝ **«տեսական-իմացական»** և **«կենսա-գործնական»** գործություններ և ըստ այդմ երկբնույթ կարիքներ, որոնց հոգածությանն ու «լցնելուն» է կոչված ողջ մշակույթը՝ գիտությունն ու արվեստը: Քանզի գիտությունները, արվեստները և ողջ մարդկության հոգևոր-քաղաքակրթական ձեռքբերումներն իրենցում բովանդակյալ իմաստության

խորհուրդներով կոչված են մարդկության երկբնույթ այդ կարիքների հոգացությանը տեսական ճշմարտությունն ու գործնական բարին տեսականորեն ճանաչող ու բացահայտող, և ապա նույն այդ բարին մարդկության կյանքում գործող իրենց նշանակությամբ: Մարդկության հոգևոր-քաղաքակրթական ամենայն ձեռքբերումները ողջ մշակույթը, որում և գիտությունն ու արվեստը, մարդկության ինքնության երկբնույթ (հոգե-մարմնավոր) կարիքների հոգածությունը կենսագործում են իրենցում բովանդակյալ մարդկային ինքնությունը, կենսակերպն ու ստեղծագործական կարողությունը հոգևոր-քաղաքակրթական ու հենց բարոյական կատարելության կրթող ու առավելացնող և այդկերպ **պիտանի** իրենց նշանակությամբ:

Արդարև, «կարիքավորությունը որպես այդպիսին» բացահայտվում և հասկացմանն իրոք ներկայանում է որպես ունիվերսալ և համընդգրկուն: «Կարիքավորության» բազմաբովանդակ խնդրակարգի բաղադրահարցերի լուծման ուղղություններով իրենց իսկական գոյության մեջ **հոգածու և պարտական լինելու են կոչված և պետությունը** իր քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, առողջապահական, մշակութային, կառույցներով, և հասարակական բազմայլ կազմակերպությունները: Պետությունը, պետական ու հասարակական ամենայն կառույցները, որպես հասարակության համատեղ կամքի դրսևորում, գոյության ու մասնագիտացված գործառնության են կոչված մարդկանց կարիքների բազմաբովանդակ խնդրակարգով:

Սոցիալական աշխատանքի օբյեկտում ներառվում են միայն սոցիալականորեն կամ նույնիսկ ավելին **հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի կարիքներ** ու տկարություններ, ընդամին, ոչ ամենայն իրենց ընդգրկմամբ, խորությամբ ու ծավալով: Սոցիալական աշխատանքը կյանքի է կոչված և նրա գոյության ու գործառնության համար հիմնարար են **մարդկային անձի ու կյանքի «սոցիալականորեն կամ նույնիսկ ավելին հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի կարիքային հիմնախնդիրները»:** Սոցիալական աշխատանքի գոյությունը որպես սոցիալական հիմնախնդիրների աղեկավար իմաստուն պատասխան անհրաժեշտ ու նախընտրելի կյանքում հենց **սոցիալականորեն կամ նույնիսկ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի «կարիքավորությունը»** իրենով նշելով

մարդկային ինքնությունում ու կյանքում էական պակասը, բացը, որ և «լցնելուն», հոգալուն է կոչված սոցիալական աշխատանքը: Սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության ու գործառնության բուն կոչումն ու ըստ այդմ իսկությունը մարդկանց անձերի ու կյանքի կարիքային հիմնախնդիրների նկատմամբ աջակից հոգածությունն է: Արդ՝ վերոասացյալը կնշանակի նաև, որ «սոցիալականորեն նշանակալի կարիքավորության» բներևության բնության բացահայտումն ապահովում է սոցիալական աշխատանքի օբյեկտիվությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում սոցիալական աշխատանքի որպես գիտության հիմնավորման այնպիսի նշանակալի հիմնահարցին, ինչպիսին է գիտության ուսումնասիրության ուրույն օբյեկտը:

Սոցիալական աշխատանքը գոյություն ունի անձանց ու խմբերի կարիքավորության ու տկարության իրողությունների վրա իր հիմնադրվածությամբ: Սա է սոցիալական աշխատանքի օբյեկտայնությունը, այսինքն՝ սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության օբյեկտային հիմնավորվածությունը, որի բացահայտմամբ և՛ նրա որպես գիտություն գոյության տեսական հիմնավորումը:

Բանալի բաներ՝ սոցիալական աշխատանք, ուսումնասիրության օբյեկտ, կարիք, կարիքավորություն, սոցիալականորեն նշանակալի կարիք, հոգացություն:

ОБЪЕКТ ИССЛЕДОВАНИЯ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ КАК НАУКИ

Анаит Джиджян

*кандидат философских наук, доцент,
ученый секретарь Института Философии,
социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье рассматривается такая существенная проблема научного обоснования социальной работы как специфичность объекта исследования.

Социальная работа призвана к существованию социально значимой нуждой и уязвимостью отдельных лиц и групп. Это и есть объектность социальной работы, и тем самым – объективность социальной работы как таковой, теоретическое обоснование ее существования как науки.

Ключевые слова: Социальная работа, предмет исследования, нужда, нуждаемость, общественно значимая нужда, признание.

OBJECT OF RESEARCH OF SOCIAL WORK AS A SCIENCE

Anahit Jijyan

*Candidate of Philosophy, Associate Professor,
Scientific secretary of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article considers such an important problem of the scientific substantiation of social work as the specificity of the object of research.

Social work is called for the existence of socially significant need and vulnerability of individuals and groups. This is the objectivity of social work, and thus - the objectivity of social work as such, the theoretical justification of its existence as a science.

Key words: Social work, subject of research, need, needness, socially significant need, charity.

AN APPROACH TO THE ARMENIAN CULTURAL MUSIC IN IRAN

Maryam Sazesh,

*Aspirant of the Institute of Philosophy,
Sociology and Law of Armenia National
Academy of Science, Yerevan, Armenia*

Introduction

For a long time, music has been existed in all societies, cultures, different places and times, and will continue to exist. Since all the human being, including the most remote tribes and groups, had a certain kind of music, it may be concluded that music has probably existed at the time of our ancestors before they were scattered throughout the world. As a result, music may be existed for at least 50000 years, and by the evidence obtained can be said that